Տասնմեկերորդ հաղորդում

Աստծու՝ սիրո և լույսի մեջ քայլող զավակները

Գրվածքների ընթերցում. Եփս 1:5, 9, 5:1-14, Ա Հվի 4:8, 16, 1:5

I. Աստծու բարեհաճությունը մարդու հետ մեկ լինելն է և մարդուն դարձնելը նույնը, ինչ Ինքն է՝ կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ Եփս 1:5, 9:

II. Որպես Աստծու զավակներ՝ մենք Աստվածամարդիկ ենք՝ Աստծուց ծնված, Աստծու կյանքն ու բնությունն ունեցող և Աստծու կենսաբանական տեսակին պատկանող՝ 5:1, Ա Հվի 3:1, Հվի 1:12-13.

Ա. Աստված մեր իրական, իսկական Հայրն է, իսկ մենք՝ Նրա իրական, իսկական զավակները՝ Ա Հվի 3:1, Եփս 5:1:

Բ. Տիեզերքի մեծագույն հրաշքն այն է, որ մարդիկ կարող են ծնվել Աստծուց, և որ մեղավորները կարող են Աստծու զավակներ դարձվել՝ Ա Հվի 3:1, 9, 4:7, 5:1, 4, 18, Հվի 1:12-13:

Գ. Այսպիսի զարմանալի աստվածային ծննդի միջոցով մենք ստացել ենք աստվածային կյանքը՝ հավիտենական կյանքը՝ որպես մեր ներսում սերմանված աստվածային սերմ՝ Ա Հվի 1:2, 3:9:

Դ. Քանի որ մենք աստվածային կյանքից ենք ծնվել և ունենք աստվածային կյանքը, մենք՝ Աստծու զավակներս, աստվածային մարդիկ ենք՝ 5:11-13, 3:1, 10:

Ե. Որպես Աստծուց ծնվածներ՝ մենք ոչ միայն աստվածային կյանքն ունենք, այլև աստվածային բնությունը՝ Բ Պտ 1:4:

Զ. Քանի որ մենք Աստծու զավակներն ենք, որոնք Աստծու կյանքն ու բնությունն ունեն, մենք կարող ենք Աստծուն ընդօրինակողներ լինել՝ Եփս 5:1:

Է. Որպես Հոր զավակները, որոնք իրենց Հոր կյանքն ու բնությունն ունեն, մենք կարող ենք կատարյալ լինել, ինչպես մեր Հայրն է կատարյալ՝ Մտթ 5:48:

III. Մենք պետք է ճանաչենք ու փորձառաբար ապրենք Աստծուն՝ որպես սիրո և լույսի՝ Ա Հվի 4:8, 16, 1:5.

Ա. Սերն ու լույսն իրականում Աստված Ինքն է. դրանք Աստծու էությունն են, Նրա էահիմքը՝ 4:8, 1:5:

Բ. Հովհաննեսի առաջին թղթում ասվում է, որ Աստված լույս է (խ. 5), այնուհետև, որ Աստված սեր է (4:8, 16):

Գ. Սերը՝ որպես Աստծու էահիմքի բնությունը, շնորհքի աղբյուրն է, իսկ լույսը՝ որպես Աստծու արտահայտության բնությունը, ճշմարտության աղբյուրն է:

Դ. Երբ աստվածային սերը հայտնվում է մեզ, այն շնորհք է դառնում, իսկ երբ աստվածային լույսը շողում է մեզ վրա, այն ճշմարտություն է դառնում:

IV. Որպես Աստծու զավակներ՝ մենք պետք է սիրո և լույսի մեջ քայլենք՝ Եփս 5:2, 8.

Ա. Ինչպես որ շնորհքն ու ճշմարտությունը 4:17-32-րդ խոսքերի հիմնական

տարրերն են, այնպես էլ սերն ու լույսն են Պողոս առաքյալի՝ 5:1-33-րդ խոսքերում տված հորդորի հիմնական տարրերը.

1. Շնորհքը սիրո արտահայտությունն է, իսկ սերը՝ շնորհքի աղբյուրը. ճշմարտությունը լույսի բացահայտումն է, իսկ լույսը՝ ճշմարտության սկզբնաղբյուրը՝ Ա Հվի 4:8, 1:5:
2. Սերն Աստծու ներքին էանյութն է, իսկ լույսն Աստծու արտահայտված տարրն է. Աստծու ներքին սերը կարելի է զգալ, իսկ Աստծու արտաքին լույսը՝ տեսնել:
3. Մեր՝ որպես Աստծու զավակների ամենօրյա քայլքը պետք է բաղկացած լինի թե՛ Աստծու սիրող էանյութից, թե՛ Աստծու շողացող տարրից. սա պետք է լինի մեր քայլքի ներքին աղբյուրը:
4. Սիրո և լույսի մեջ քայլելն ավելի խոր ու քնքուշ են, քան շնորհքի ու ճշմարտության համաձայն ապրելը:

Բ. «Սիրո մեջ քայլեցեք, ինչպես Քրիստոսն էլ մեզ սիրեց ու Իրեն մեզ համար տվեց որպես Աստծու համար ընծա և զոհ՝ անուշահոտ բուրմունք լինելու»՝ Եփս 5:2.

1. Սիրո մեջ քայլել նշանակում է Աստծու հետ մտերմության մեջ քայլել՝ հմմտ Ա Հվի 3:1.
   ա. Հոր ներկայության մեջ մենք ոչ միայն վայելում ենք շնորհքը՝ սիրո արտահայտությունը, այլև վայելում ենք հենց սերը:
   բ. Մեր ամենօրյա քայլքում մենք պետք է միշտ հոգանք մեր Հոր զգացմունքի համար, քանի որ մտերմորեն ապրում ենք Նրա քնքուշ սիրո մեջ:
2. Եփեսացիներին ուղղված թղթի նպատակը մեզ բերելն է սիրո՝ որպես Աստծու ներքին էության մեջ, որպեսզի վայելենք Նրա ներկայությունն աստվածային սիրո քաղցրության մեջ և այդպիսով սիրենք ուրիշներին, ինչպես Քրիստոսն էր անում՝ 5:25.
   ա. Սիրո վիճակում և մթնոլորտում մենք հագենում ենք Աստծով՝ Նրա առջև սուրբ և անարատ դառնալով՝ 1:4:
   բ. Սերը, որի մեջ մենք արմատավորված ենք աճելու համար և հիմնավորված՝ կառուցվելու համար, աստվածային սերն է, որն իրական է դառնում մեզ համար և որը փորձառաբար ապրում ենք գործնականում՝ 3:17:
   գ. Քրիստոսի սերը, որը Քրիստոսն Ինքն է, անչափելի է և գիտությունը գերազանցող, սակայն մենք կարող ենք այն ճանաչել՝ այն փորձառաբար ապրելով՝ խ. 19:
   դ. Աստծու սիրո մեջ, որը Քրիստոսի մեջ է, մենք կառչում ենք ճշմարտությանը, այսինքն՝ Քրիստոսին Իր Մարմնի հետ՝ 4:15:
   ե. Քրիստոսի Մարմինը կառուցում է ինքն իրեն սիրո մեջ. սերը Քրիս-

տոսի Մարմինը կառուցելու համար ինչ-որ բան լինելու և ինչ-որ բան անելու ամենագերազանց ճանապարհն է՝ խ. 16, Ա Կրթ 12:31:

զ. Տիրոջն անապականության մեջ սիրել նշանակում է Նրան սիրել նոր ստեղծագործության և Եփեսացիներին ուղղված թղթում բացահայտված բոլոր անապական բաների համաձայն՝ 6:24:

3. Որպես մարդիկ, որոնք վերածնվել և դարձել են Աստծու կենսաբանական տեսակը, մենք՝ Աստծու զավակներս, պետք է սեր լինենք, որովհետև Աստված սեր է. քանի որ մենք կյանքով և բնությամբ Աստված ենք դառնում, նաև պետք է սեր դառնանք՝ Ա Հվի 4:8, 16:

Գ. «Մի ժամանակ դուք խավար էիք, իսկ հիմա Տիրոջ մեջ լույս եք. ինչպես լույսի զավակներ քայլեցեք»՝ Եփս 5:8.

1. Ինչպես Աստված է լույս, այնպես էլ մենք՝ Աստծու զավակներս, լույսի զավակներ ենք՝ Ա Հվի 1:5, Եփս 5:8, Հվի 12:36:
2. Մենք ոչ միայն լույսի զավակներ ենք, այլ լույսն ինքը. մենք լույս ենք, որովհետև Տիրոջ մեջ մեկ ենք Աստծու հետ ՝ Մտթ 5:14, Ա Հվի 1:5:
3. Երբ լույսի մեջ ենք, դուրս ենք ճշտի և սխալի ոլորտից՝ խ. 7:
4. Եթե որպես լույսի զավակներ քայլենք, կբերենք Եփս 5:9-ում նկարագրված պտուղները.

ա. Լույսի պտուղը բնությամբ պետք է լինի բարի, միջոցով՝ արդար, և արտահայտությամբ՝ իրական, որպեսզի Աստված կարողանա արտահայտվել որպես մեր ամենօրյա քայլքի իրականությունը:

բ. Լույսի պտուղը բարությամբ, արդարությամբ ու ճշմարտությամբ Եռամեկ Աստծու հետ է կապված.

1) Հայր Աստված՝ որպես բարություն, լույսի պտղի բնությունն է, ուստի 9-րդ խոսքի բարությունը վերաբերում է Հայր Աստծուն՝ Մտթ 19:17:

2) Արդարությունը Որդի Աստծուն է մատնանշում, որովհետև Քրիստոսը եկավ Աստծու մտահղացումը իրագործելու՝ Աստծու արդար ճանապարհի համաձայն՝ Հռմ 5:17-18, 21:

3) Ճշմարտությունը, լույսի պտղի արտահայտությունը, Հոգի Աստծուն է մատնանշում, որովհետև Նա իրականության Հոգին է ՝ Հվի 14:17, 16:13:

գ. Ապացույցը, որ մենք որպես լույսի զավակներ ենք քայլում, երևում է այսպիսի պտուղ բերելուց:

© 2024 Living Stream Ministry